

Ձեռնարկ նուիրուած Հայ Ժողովրդական Արուեստին

Կիրակի 10 Մայիս առաւօտեան ժամը 11:30- ին, Հելլենական ժողովրդական արուեստի թանգարանին մէջ, Փլաքայի շրջան, տեղի ունեցաւ ձեռնարկ մը նուիրուած Հայ Ժողովրդական արուեստին: Ձեռնարկը կազմակերպուեցաւ թանգարանի եւ Հ.Բ.Ը.Մ.-ի Տիկնանց Օժանդակ Մարմնի վարչութիւններուն համագործակցութեամբ:

Օրուան հանդիսավար Տիկ. Անի Տէմիրճեանի բացման խօսքէն ետք բեմ հրաւիրուեցաւ Տիկ. Եանուլա Գափլանի՝ տնօրէն Հելլենական ժողովրդական արուեստի թանգարանին որը անդրադարձաւ Յոյն եւ Հայ ժողովուրդներու սերտ համագործակցութեան նշելով թէ պատմական յիշողութիւնը աւելի ուժեղ է քան որեւէ կերպի վայրագութիւն:

Օրուան գլխաւոր բանախօսն էր Տիկ. Աննա Պալեան՝ գլխաւոր գիտաշխատող, Իսլամական արուեստի թանգարանին , որը նախ շեշտեց եկեղեցույ մեծ դերը արուեստի ծաղկման, ապա զոյգահերականները կատարեց Փոքր Ասիայէն բերուած Յունական եւ Հայկական ժողովրդական եւ եկեղեցական արուեստի արարկաներու միջեւ:

Ապա բեմ ելաւ Հ.Բ.Ը.Մ.-ի Յունաստանի Կեդրոնական Յանձնաժողովի ատենապետ՝ Պրն. Յակոբ Ֆեսճեան, որ ներկայացուց Պրն Յակոբ Ճէլալեանը մատնանշելով իր ցուցաբերած գործունէութիւնը Հայաստանի եւ Յունահայ գաղութին համար:

Իր կարգին Պրոջ Յ. Ճէլալեան նշեց թէ մշակութային ժողովրդական փոխանակումները ազգէ ազգ չեն վնասեր նոյնինքն մշակոյթին այլ կը նպաստեն ատոր գոյատեւման: Յիշեցնենք թէ Պրն. Ճէլալեան նուիրատուն է թիով 301 արուեստի իրերու, Սարտարապատի մէջ գտնուած Ազգագրական թանգարանին:

Ապա Տիկ. Արտա Պետիկեան ընթերցեց այդ օրը ներկայացուած Յ. Ճէլալեանի նուիրած արարկաներուն գաթալոկի նախաբանը (գունատիպ, 168 էջ, տպուած «Տիգրան Մէծ» հրատարակչատան կողմէ):

Գեղարուեստական բաժինով հանդես եկան Տիկ. Եղիս Պասմաճեան արտասանելով Յունարէն լեզուով Աւետիք Իսահակեանի «Մեր Պատմիչները եւ մեր Գուսանները» բանաստեղծութիւնը, Տիկ Քրիսթին Թօքաթլեան դաշնամուրի վրայ նուագելով Կոմիտասէն 6 եղանակներ, Պրն. Յակոբ Քոլանեան կիթարի վրայ նուագելով 3 ժողովրդական մեղեդիներ իր յարմարեցումով, Պրն. Ստեփան Տեքերեան իր նուագախումբով մասնակցութեամբ Պրն. Վահան Գալստեանի եւ Պրն. Լեֆթերիս Խավուչասի՝ մեկնաբանեցին շարք մը Հայկական ժողովրդական երգեր:

Բազմահոծ սրահը անգամ մը եւս փաստեց թէ աշխարհով մէկ սփռուած Հայ փեկորը ծարաւ է այսպիսի հայաշունչ ձեռնարկներու յաղորդուելու համար մեր նախնիներու ձգած աւանդութիւններով: